

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ, 09.02.2016

<http://www.asparez.am/news-hy/գեւորգ-վարդանյան-«ԵՏՄ-ընդհանուր-հարթ/#.VrrMxYHYKeB.facebook>

Գեւորգ Վարդանյան. «ԵՏՄ ընդհանուր հարթակի հենքով էլ ավելի ենք ակտիվացնելու գիտահնովացիոն գործունեությունը»

Շատերը Հայաստանում գիտության զարգացման հեռանկարը տեսնում են Եվրասիական տնտեսական միության համատեքստում: Նախորդ տարվա սկզբին, երբ ուժի մեջ մտավ Եվրասիական տնտեսական միության մասին (ԵՏՄ) պայմանագիրը, սկսեց աստիճանաբար ուրվագծվել գիտության զարգացման հեռանկարը: Հայաստանի՝ ԵՏՄ անդամ լինելը հնարավորություն է տալիս ԵՏՄ երկրներից առանց մաքսատուրքի, Հայաստան ներմուծել տարբեր, այդ թվում նաեւ գիտական սարքավորումներ, ինչի շնորհիվ պարզեցվելու է գիտական սարքավորումների ձեռքբերման գործընթացը:

-Հայաստանն ակտիվ կապեր ունի Ռուսաստանի, Բելոռուսիայի, Ղազախստանի հետ, որոնց հետ համատեղ աշխատանքների արդյունքում կատարվել են մի շարք մշակումներ: Այդ մշակումների համար անհրաժեշտ են եղել տարբեր սարքավորումներ: Եթե մինչ ԵՏՄ անդամակցությունը, գիտական սարքերի ներմուծման ընթացքում եղել են մաքսատուրքերի հետ կապված դժվարություններ, ապա վստահ եմ, որ ընդհանուր եվրասիական միասնական համակարգում նման խոչընդոտները կվերանան, ինչը չափազանց կարեւոր քայլ է համարում, հատկապես գիտության ֆինանսավորման ներկայիս սուղ պայմաններում,- ասում է Նորամուծության եւ ձեռներեցության ազգային կենտրոնի տնօրեն, ՀՀ ԳԱԱ երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ, երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի ղեկավար մարմնի անդամ Գեւորգ Վարդանյանը «Ասպարեզի» հետ հարցազրույցի ժամանակ:

Գ.Վարդանյանը նշում է նաեւ, որ թեեւ վերջին մեկ տարվա ընթացքում գիտության ֆինանսավորման առանձնակի աճ տեղի չի ունեցել, այնուհանդերձ, որոշ առաջընթաց գիտության ոլորտում արձանագրվել է:

-Իհարկե, անհնար է փոխել ամեն ինչ միանգամից. իսկ առաջընթաց կա, եւ դրական քայլերն աստիճանաբար նկատելի են դառնում,- նշում է Գ. Վարդանյանը:

Նախորդ տարեվերջին Բելոռուսի մայրաքաղաք Մինսկում կայացավ առաջին եվրասիական միջազգային երիտասարդական ֆորումը, որին մասնակցեցին ՀՀ, ՌԴ-ի, Բելոռուսիայի, Ղազախստանի երիտասարդ գիտնականները: Համաժողովում Հայաստանը ներկայացնում էր Գեուրգ Վարդանյանը: Նա պատմում է, որ ֆորումի ընթացքում երիտասարդ գիտնականների միջեւ մտքերի փոխանակում է եղել, ներկայացվել են ինովացիոն տարբեր նախագծեր:

Եվրասիական տնտեսական միության շրջանակներում կայանալու է նաեւ ԵՏՄ երկրների երիտասարդ գիտնականների երկրորդ հանդիպումը: Այս անգամ միջազգային ֆորումը կկազմակերպվի Ալմա Աթայում: Նախատեսվում է գիտության ոլորտում կատարվելիք արդեն գործնական քայլերի մշակման տարբերակների քննարկում:

-Արդեն մի քանի տարի է, ինչ այս չորս երկրների երիտասարդ գիտնականների խորհուրդները համագործակցում են: Վստահ եմ, որ Եվրասիական տնտեսական ընդհանուր հարթակի հենքով էլ ավելի ենք ակտիվացնելու մեր համագործակցությունը գիտության եւ նորարարության ոլորտներում: Որպես ՀՀ ԳԱԱ երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ, նորամուծության եւ ձեռներեցության ազգային կենտրոնի տնօրեն՝ ձեռնարկում եմ բոլոր հնարավոր քայլերը՝ գիտության եւ ինովացիայի զարգացման ուղղությամբ՝ ընդլայնելու ինովացիոն եւ գիտական գործունեությունը եվրասիական տնտեսական ընդհանուր հարթակում, – եզրափակում է Գ. Վարդանյանը:

Հեղինակ՝ Անի Մկրտչյան